ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասնիկյան համայնք , Մյասնիկյան 4 ,հեռ.0233 74 6-73

«07» հուլիսի 2017թ

թիվ 106

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝
Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ուղարկում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ղեկավարի 2017թվականի հունիս ամսվա ընդունած որոշումները և արձակած կարգադրությունները:

Առդիր 11 թերթից.

Համայնքի ղեկավար Տ. Բաղդասարյան

112.93/9905/17
10 07 2017

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասնիկյան համայնք,Մյասնիկյան փող. 4շենք,
Հեռ. 0233-74-6-73 էլ.փոստ myasnikyan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«07» հունիսի 2017 թվականի N 38-Ա

ԳԵՎՈՐԳ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Ինքնակամ շենք, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» 25դեկտեմբերի 2002թվականի Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի երկրորդ կետի պահանջներով և նկատի ունենալով որ օրենսդրության խախտումներով հատկացված և կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառման տնամերձը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակության օգտագործելու համար և ընդգրկված չէ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում և չի գտնվում ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման, անվտանգության, պատմամշակույթային հողերի պահպանման գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտի իրավունք և քանի որ հողամասը նրա կողմից օգտագործվում է մինչև 2001թվականի մայիսի 5-ը և հիմք ընդունելով քաղաքացի Գևորգ Գուրգենի Գրիգորյանի դիմումը.

Որոշում եմ՝

1. Ճանաչել՝ Գևորգ Գուրգենի Գրիգորյանի սեփականության իրավունքը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի Թումանյան 77 հասցեում գտնվող 066-016 կադաստրային ծածկագրով 0,10հա տնամերձ հողամասի և 100քմ արտաքին մակերեսով կիսակառույց բնակելի տան նկատմամբ:
2. Հողամասի սահմանները որոշվում են ԱՁ Ա.Գեղամյանի կողմից փաստացի չափագրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Քաղաքացի Գևորգ Գրիգորյանին պատկանող տնամերձ հողամասին տալ հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ Մյասնիկյան համայնք, Թումանյան փողոց տուն 77:
4. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ԱԳԿՊԿ մարզերի միավորված ստորաբաժանմանը կատարել վերը նշված հողամասի և կիսակառույց բնակելի տան նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Տ.Բաղդասարյան

2017թվականի հունիսի 7
Հ.Մյասնիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասնիկյան համայնք,Մյասնիկյան փող. 4շենք,
Հեռ. 0233-74-6-73 էլ.փոստ myasnikyan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«21» հունիսի 2017 թվականի N 39-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով«Համայնքային ծառայության մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի սահմանված դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N13-Ն հրամանը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար 2017թվականի հուլիսի 26-ին հայտարարել մրցույթ:
   - աշխատակազմի քարտուղար (ծածկագիր1.2-1), ժամը՝ 10^{00}-ին.
   - առաջատար մասնագետ (ծածկագիր3.1-1), ժամը՝ 11^{30}-ին.
   - առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-2), ժամը՝ 13^{00}-ին.
   - առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-3), ժամը՝ 14^{30}-ին.
   - առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-4), ժամը՝ 16^{00}-ին.
   - առաջին կարգի մասնագետ (ծածկագիր3.2-1), ժամը՝ 17^{30}-ին.

2. Մրցույթի նախապատրաստման աշխատանքներն իրականացնել «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով և ժամկետով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Տ.Բաղդասարյան

2017թվականի հունիսի 21
Հ. Մյասնիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասնիկյան համայնք,Մյասնիկյան փող. 42ենք,
Հեռ. 0233-74-6-73 էլ.փոստ myasnikyan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«21» ապրիլի 2017 թվականի N 40-Ա

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 17-րդ հոդվածի սահմանված դրույթներով, *որոշում եմ*՝

1.2017թվականի հունիսի 28-ին ժամը 16:00-ին հրավիրել Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ավագանու արտահերթ նիստ , հետևյալ օրակարգով՝

ա) Համայնքի ավագանու «Մյասնիկյան համայնքի 2017թվականի բյուջեն հաստատելու մասին» N 10-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

բ) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի 2017թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի ընթացքի մասին հաղորդում ներկայացնելու մասին.

գ) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին.

դ) Համայնքի բյուջեից դրամական օգնություն տրամադրելու մասին.

ե)Մյասնիկյան համայնքի վարչական տարածքում տեղական վճարի արտոնություն սահմանելու մասին.

2.Նիստի օրակարգի նախագիծը տրամադրել ավագանու անդամներին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համյանքի ղեկավար՝ Տ.Բաղդասարյան

2017թվականի ապրիլի 21
Հ.Մյասնիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

«21» հունիսի 2017թ. N41-Ա

ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ ԱՅԳԵՏՆԱԿԻ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրանց գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման,հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2012 թվականի հունվարի 18-ի <<Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին>> թիվ 9 որոշումը.

Որոշում եմ՝

1.Նորայր Մանուկի Տիգրանյանին սեփականության իրավունքով պատկանող այգեգործական թաղամասի այգետնակին (ծածկագիր 04-066-260-021 տալ հասցե Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ Մյասնիկյան համայնք, Այգեգործական թաղամաս, 1-ին փողոց N 9 հասցեն:

2.Սույն որոշումն ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Տ.Բաղդասարյան

2017 թվականի հունիսի 21
Հ.Մյասնիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

«28» հունիսի 2017թ. N 42-Ա

ԱԼԵՔՍԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՐՀԵՍՏԱՆՈՑԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ դեկտեմբերի 12-ի, <<Հայաստանի Հանրապետությանքաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրանց գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2012թվականի հունվարի 18-ի <<Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին>> թիվ 09 որոշումը.

Որոշում եմ՝

1. Ալեքսան Աբրահամյանին պատկանող արհեստանոցին (ծածկագիր 008-012) տալ հասցե՝ Հայաստան Հանրապետության Արմավիրի մարզ Մյասնիկյան համայնք Պ.Սնակի փողոց N 23/5 հասցեն:
2. Սույն որոշումն ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Տ.Բաղդասարյան

2017 թվականի հունիսի 28
Հ.Մյասնիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ
«28» հունիսի 2017թվականի N 43-Ա

ԱԼԵՔՍԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՐՀԵՍՏԱՆՈՑԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալեքսան Աբրահամյանի դիմումը, Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի վարչական տարածքի 0008-0012 ծածկագրի Պ.Սևակի N 23/5 հասցեում գտնվող արհեստանոցի հողհատկացման հիմքերը վերականգնելու մասին դիմումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ալեքսան Աբրահամյանը, ըստ «05» մարտի 1997թվականի գյուղապետարանում հաստատված վաճառքի թղթի ձեռք է բերել արհեստանոցը (կառուցված 1954 թվականին),որի հողհատկացման հիմքերը չեն պահպանվել և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի մասին 35-րդ հոդվածի 24-րդ կետի, ՀՀ հողային օրենսգրքի 118-րդ հոդվածի 6-րդ կետի, 64-րդ հոդվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետով,9-րդ կետի և 16-րդ կետի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը,որ արհեստանոցի զբաղեցրած հողատարածքը չի ընդգրկված ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վերականգնել Ալեքսան Աբրահամյանի սեփականության իրավունքով պատկանող արհեստանոցի զբաղեցրած 947քմ հողատարածքի հողհատկացման հիմքերը և այդ հողամասի նկատմամբ ճանաչել նրա պայմանով սեփականության իրավունքը:

2. Հաստատել հողամասի սահմանված կարգով գլխավոր հատակագիծը:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Տ.Բաղդասարյան

2017թվականի հունիսի 28
Հ.Մյասնիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«01» հունիսի 2017թ N 14-Ա

ԳԵՎՈՐԳ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՎՃԱՐՈՎԻ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածի սահմանված դրույթներով և հիմք ընդունելով Գևորգ Գրիգորյանի 2017թվականի հունիսի 1-ի անձնական դիմումը.

Կարգադրում եմ՝

1) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ղեկավարի տեղակալ՝ Գևորգ Գրիգորյանին 2017թվականի հունիսի 1-ից մինչև հուլիսի 4-ը ներառյալ տրամադրել ամենամյա վճարովի արձակուրդ՝ 2016 - 2017թթ ժամանակաշրջանի համար՝ 24 աշխատանքային օր ժամանակով (20 նվազագույն և 4 լրացուցիչ):
2) Համայնքի ղեկավարի տեղակալի աշխատանքների պարտականությունների կատարումը վերապահել աշխատակազմի քարտուղար՝ Ա.Խաչատրյանին:
3)Գ.Գրիգորյանին աշխատանքի մեջ համարել 2017թվականի հուլիսի 6-ին:
4)Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար՝ Տ.Բաղդասարյան

2017թվականի հունիսի 1
Մյասնիկյան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 19» հունիսի 2017թ. Կարգադրություն N 15

ՆԱԻՐԱ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՎՃԱՐՈՎԻ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածի սահմանված կետերով հիմք ընդունելով՝ Ն. Մովսիսյանի անձնական դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի գրադարանի տնօրեն Նաիրա Նշանի Մովսիսյանին 2017 թվականի հունիսի 19-ից մինչև օգոստոսի 14-ը ներառյալ տրամադրել 2016 թվականին հասանելիք արձակուրդը (20 նվազագույն և 5 լրացուցիչ օր) և 2017 թվականի արձակուրդի մի մասը (15 աշխատանքային օր):
2. Նաիրա Մովսիսյանի աշխատանքի պարտականությունների կատարումը վերապահել գրադարանավարուհի՝ Հռիփսիմե Հովհաննիսյանին:
3. Ն. Մովսիսյանին աշխատանքի մեջ համարել 2017 թվականի օգոստոսի 15-ին:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար՝ Տ. Բաղդասարյան

« 19» հունիսի 2017թ.

Հ. Մյասնիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«19» հունիսի 2017 N 16-Ա

ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ
ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, համայնքի տարածքում ցանքատարածությունների հաշվառման նպատակով.

Կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին՝ (Գ.Գրիգորյանին) սույն կարգադրությամբ հաշվառել համայնքի ցանքատարածությունները և արդյունքների մասին երեք օրվա ընթացքում հայտնել համայնքի ղեկավարին:
3. Հանձնաժողովին՝ (Գ.Գրիգորյանին) սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել ավագանու անդամ՝ Աշոտ Սարգսյանին:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար՝ Տ.Բաղդասարյան

«19» հունիսի 2017 թվական
Հ. Մյասնիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասնիկյան համայնք,Մյասնիկյան փող. 42շենք,
Հեռ. 0233-74-6-73 էլ.փոստ myasnikyan.armavir@mta.gov.am

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«20» հունիսի 2017թվականի N 17-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 6-րդ կետերով, «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով ,

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի վարչական տարածքում գործող առևտրի և կենցաղային ծառայությունների ոլորտում/ 2017թվականի հունիսի 20-ից մինչև 22-ը իրականացնել հսկողություն:
2. Հսկողության իրականացումը վերապահել համայնքի ղեկավարի տեղակալ՝ Գևորգ Գրիգորյանին և առաջատար մասնագետ՝ Հայկ Բաղդասարյանին և արդյունքների մասին հայտնել համայնքի ղեկավարին:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար՝ Տ. Բաղդասարյան

2017թվականի հունիսի 20
Հ.Մյասնիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

«6» հունիսի 2017թ. N 37-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրանց գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման,հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2012 թվականի հունվարի 18-ի <<Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին>> թիվ 9 որոշումը.

Որոշում եմ՝

1.Էֆրոնյա Փափազյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը (ծածկագիր 049-012) տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ Մյասնիկյան համայնք Բաղրամյան փողոց N 48 հասցեն:
2.Սույն որոշումն ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Տ.Բաղդասարյան

2017 թվականի հունիսի 6
Մյասնիկյան համայնք